

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

30.04.2015թ

Արձանագրություն թիվ 12

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի արտաքին համագործակցությունը ԱՊՀ և արտերկրների համալսարանների հետ և բարելավման ուղիները

Լսելով և քննարկելով համալսարանի միջազգային համագործակցության վերաբերյալ Արտաքին կապերի դեպարտամենտի պետ Հ. Մայադյանի զեկույցը՝ գիտական խորհուրդը արձանագրում է, որ ներկայումս առավել է կարևորվում համալսարանի արտաքին համագործակցությունը այլ համալսարանների ու կոնսորցիումների հետ:

Շարունակվել և ընդլայնվել են ՀԱԱՀ-ի համագործակցության ծրագրերը Եվրոպական, Ամերիկյան և ԱՊՀ բուհերի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելով ՀԱԱՀ-ի մասնակցությունը կարևոր կոնսորցիումներում և միջազգային կրթագիտական փոխանակման ծրագրերում: Ներկայումս ՀԱԱՀ-ի՝ բազմաթիվ երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ գործող կրթագիտական պայմանագրերի ու համաձայնագրերի թիվը շուրջ 40 է:

2000-2015 թթ. ընթացքում ՀԱԱՀ-ը հաջողությամբ իրականացրել և շարունակում է իրականացնել Եվրամիության 11 Տեմպուս ծրագրեր, որոնցից 6-ի ուղղությամբ աշխատանքները ներկայումս շարունակվում են: Այս ծրագրերի շրջանակներում հիմնադրվել են մի քանի նոր տնտեսագիտական մասնագիտություններ, ներդրվել են նոր առարկայական ծրագրեր, ձեռք են բերվել մեծ թվով համակարգիչներ և լաբորատոր սարքեր, ինչպես նաև ամբողջովին կահավորվել են երկու նոր լաբորատորիաներ. <<Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի /GIS/ լաբորատորիան>> Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնում և <<Գյուղատնտեսության, պարենամթերքի և շրջակա միջավայրի պահպանության ժամանակակից բիոտեխնոլոգիական>> համահամալսարանական լաբորատորիան:

Erasmus Mundus գործողություն 2 ծրագրի “ELECTRA”, “EMBER”, “EFFORT” և TEMPUS-ի մի շարք նախագծերի, Վայհենշտեֆանի «Ագրարային մենեջմենթ», LOGO ծրագրերի և բազմաթիվ այլ փոքր ու մեծ ծրագրերի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանից միջին հաշվով տարեկան իրականացվել է 80-ից ավելի արտասահմանյան գործուղումներ:

Չնայած արտաքին համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի որոշակի հաջողություններին և համագործակցության անընդհատ ընդլայնմանը, այստեղ դեռևս **առկա են բացթողումներ և աշխատանքների կազմակերպման բարելավման հնարավորություններ:**

Գիտական խորհուրդը որոշում է .

1. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու. Մարմարյանին և Արտաքին կապերի պետ Հ. Սայադյանին աշխատանքներ տանել Վայենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի հետ կրկնակի կամ համատեղ դիպլոմների տրամադրման ուղղությամբ:
2. Հանձնարարել Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ս. Դավեյանին ստեղծել հանձնախումբ օտար լեզուներով բակալավրիական և մագիստրոսական առանձին դասընթացների ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ինչպես նաև դասավանդող անձնակազմի կոմպլեկտավորման հարցերը կարգավորելու համար:
3. Հանձնարարել ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին և Արտաքին կապերի դեպարտամենտի պետ Հ. Սայադյանին վերահսկել միջազգային ծրագրերի վերաբերյալ ստացված տեղեկատվության ժամանակին և համակողմանի տարածումը դեկանատներ և ամբիոններ:
4. Հանձնարարել ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին կազմակերպել օրինակելի առցանց դասընթացներ:
5. Հանձնարարել ամբիոնի վարիչներին ակտիվորեն համագործակցել Արտաքին կապերի դեպարտամենտի հետ՝ միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ունենալու և մասնակցելու հնարավորությունների մասին, ինչպես նաև հանդես գալ ծրագրի առաջարկներով:
6. Հանձնարարել օտար լեզուների ամբիոնին և Լեզուների կենտրոնին բարձրացնել օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը և օտար լեզուների իմացությունը պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի շրջանում:
7. Հանձնարարել Կադրերի և հատուկ բաժնի վարիչ Ա. Գազարյանին միջազգային ծրագրերում ընդգրկված պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործուղումների վերաբերյալ **բոլոր** հրամանների պատճենները տրամադրել Արտաքին կապերի դեպարտամենտին պատշաճ հաշվառում կատարելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Թարվերդյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ս. Բալասանյան